

Ողջույն բոլորին:

Իմ անունը Մարշա Հայնդս է: Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել AutismOne-ին և Focus for Health-ին ինձ և իմ ամուսնուն հրավիրելու համար:

Autism One-ը այն քիչ շահույթ չհետապնդող կազմակերպություններից է, որում ես կարող եմ իմ ներդրումն ունենալ, և պատճառն այն է, որ նրանք այս բոլոր նկարված պրեզենտացիաները դարձնում են անվճար և հասանելի իրենց կայքում: Դա պահանջում է ահռելի գումար: Եվ եթե ձեզնից որևէ մեկը կարող է 1 կամ 2 դոլար նվիրաբերել գործին, նրանք կարող են շարունակել այս գործը, որովհետև այս տեղեկատվությունը հրաշալի է:

Եվ քանի որ դուք նստած եք այստեղ, բաց եք թողնում բժիշկ Ադամսի ելույթը, ով մոտակայքում է և կատարում է հիանալի աշխատանք մեր երեխաների համար: Ես իրականում քրնտաջան աշխատում եմ բարձրաձայնելու նրա փորձարկումների մասին, որովհետև նա շտկում է ստամոքսի բոլոր խնդիրները, որ ունեն մեր երեխաները: Ըստ նրա հետազոտության՝ կա 45-70 տոկոս ախտանիշների նվազում:

Ամերիկայի սննդի և դեղորայքի ադմինիստրացիան (FDA) արագընթաց ճանապարհ է անցնում, ինչը հիանալի է, բայց մենք դեռ պետք է գումար հավաքենք դա իրագործելու համար: Եթե դուք հետաքրքրված եք դրանով, իմ ամուսինը դրա մի մասն է կազմում:

Հիմա ես կսկսեմ:

Ես Մարշա Հայնդսն եմ, իմ հայտնիությունը պայմանավորված է նրանով, որ ես Ռայրնի մայրն եմ: Եվ ուզում եմ իմանաք, որ երեխաները բուժվում են աուտիզմից և հանրությունը չգիտի, որ սա հնարավոր է: Համոզված եղեք, որ շաբաթ օրը ժամը 5-ին կբեռնեք աուտիզմի բալանսի վերականգնման փաստափուլը, քանի որ նրանք շատ երեխաներ ունեն այնտեղ, որ վերականգնվել են, և Ջեննիֆերը (նա «առանց վնասելու» բուժման հեղինակն է) ցույց կտա իր փաստաթղթերը: Ջեննիֆերն ու ես վերականգնել ենք մեր երեխաներին շատ տարբեր ձևերով, բայց երկուսիս մոտ էլ դա ստացվել է: Այսօր իմ տղան աշխատում է որպես օդատիեզերական ճարտարագետ խոշոր ընկերություններից մեկում, նա ունի լավ ընկերներ, բնականոն կյանք, և ես ուզում եմ, որ այն ինչ կատարվել է Ռայրնի հետ, կատարվի նաև բոլոր երեխաների հետ, դրա համար էլ իմ բոլոր գրքերից ստացված գումարը և ամեն

ինչ, ինչ ես անում եմ, աուտիզմի համար է: Տեղեկատվությունը և հետազոտությունները վերաբերում են օրինակ այն պատճառներին, որոնց բժիշկ Ադամսն է հանգել:

Ես չունեմ որևէ բժշկական աստիճան, չնայած ես համարում եմ, որ ունեմ: Եվ ես կարող եմ միայն խոսել այն մասին, թե ինչն է օգնել իմ տղային ամենաշատը: Մասնագետներն ասում էին, որ ոչինչ չեն կարող անել մեր տղայի համար, բայց մենք չէինք հավատում աուտիզմի մասին ասվող այդ ամենին: Մենք շատ պիտակներ ունենք, ինչպիսիք են՝ Մանկական սուր անուղղակի նյարդահոգեկան սինդրոմը (PANS), մանկական աուտոիմուն նյարդահոգեկան խանգարումները, որոնք կապված են ստրեպտոկոկային վարակների հետ (ՄԱՆԽԿԱ, PANDAS), զգայական գործընթացների խանգարումը, ուշադրության դեֆիցիտի և հիպերակտիվության խանգարումը: Սրանք նկարագրում են այն ախտանիշները, որոնք տարբեր են յուրաքանչյուր երեխայի մոտ: Եվ այն մարդու համար, ով նոր ախտորոշված աուտիզմով երեխա ունի, դա կարող է բավականին շփոթեցնող լինել, բայց իմ մնացյալ խոսքում ես այն կանվանեմ միայն աուտիզմ, և դուք չեք ծանրաբեռնվի, քանի որ ես կօգտագործեմ «բժիշկ մոր» տերմիններ:

Շատերիս ասվել է, որ աուտիզմը զարգացման կամ հոգեկան խանգարում է, դա իհարկե ճիշտ չէ: Ճիշտն այն է, որ այն թույլ իմունային համակարգի խնդիր է, և ինչքան շատ երեխաներ ստանան բժշկական բուժումը, որն անհրաժեշտ է, այնքան շատ երեխաներ կլավանան: Ռայընը շատ տարբեր էր այլ երեխաներից, ուներ ինտենսիվ հույզեր, լաց չէր լինում, այլ գոռում էր: Նա պոկում էր վերնաշապիկի ետևի մասի պիտակը: Նրա մայրն էլ մի քիչ նրա նման էր: Ես նկատել էի, որ նրա վարտիքները ճանկոտված էին: Նա տարօրինակ ձայներ էր հանում, քայլում էր ոտքերի մատների վրա, թափահարում էր թևերը, հիմար բաներ էր անում, նա կարծես հարբած լիներ ժամանակի մեծ մասը: Երբեմն Ռայընը հիպերակտիվ էր և երբեմն էլ ընդհանրապես էներգիա չունեց: Նա ուներ ականջի հաստատուն վարակ, որը ի ծնե էր: Երբ նա 6 ամսական էր, խողովականման սարք տեղադրեցին նրա ականջում: Ականջի վարակների և կոկորդի ստրեպտոկոկային բորբոքման («ստրեպ կոկորդ») պատճառով նա գրեթե միշտ հակաբիոտիկներ էր օգտագործում, որը խառնում էր նրա իմունային համակարգը:

Ամեն ինչ նույնը պահպանելը շատ կարևոր էր Ռայընի համար, նա չէր ուզում ոչինչ փոխել և բարկանում էր առօրյայի ամենափոքր փոփոխությունից:

Ինձ համար դժվար է եղել, ես միշտ զարմանում էի, թե ինչու էր նա անում մի բան, որից գիտեր, որ խնդիրների մեջ էր ընկնելու: Դա այն ռեակցիան էր, որի վրա նա կարող էր հույս դնել, երբ նա պատրաստվում էր փորձանքի մեջ ընկնել, քանի որ ամեն ինչ նույն ձև կմնար, և դա հարմարավետ էր նրա համար. մի քիչ տարօրինակ է, բայց այսպիսին են մեր երեխաները: Ես տագնապում էի, երբ մենք ուշ էինք գալիս տուն աշխատանքից, քանի որ ցերեկը նրա համար վերածվում էր աղետի: Նա պետք է նախաճաշեր ժամը 12:00-1:00-ն ընկած ժամանակահատվածում, հակառակ դեպքում նա հրաժարվում էր ուտելուց: Երբ մենք ուշանում էինք, ես արագ վազում էի տուն, մինչ նա խաղում էր ավտոմեքենաներով, և ժամացույցի սլաքները ետ էի տալիս: Մենք ամեն ինչ անում էինք, որպեսզի ապրեինք աուտիզմը: Եթե ես նրան թույլատրեի, նա ամբողջ օրը կանցկացներ մի սենյակից մյուսը գնալով, լույսերը վառելով ու անջատելով, բացելով ու փակելով դռները, միացնելով ռադիոն յուրաքանչյուր անցքից նորից ու նորից: Նա երբեք չէր ուզում ինչ-որ տեղ գնալ, բայց երբ մի անգամ գնաց, չէր ուզում ետ վերադառնալ: Տղայիս համար աշխարհը շփոթեցնող վայր էր, և ինչ-որ կերպ իրերի կանխատեսելի լինելը նրան հանգստացնում էր: Նախքան իմանալը Ռայընի աուտիզմի մասին մենք գնացինք Դեննիի տուն խաղալու: Եվ երբ գնալու ժամանակն եկավ, Ռայընը շատ տխրեց, նա չէր ուզում հեռանալ: Ես նրան ասացի, որ ժամանակն է գնալու: Ես նրան տարա և նստեցրեցի ավտոմեքենայի մեջ: Հանկարծ լսեցի ամրագոտու ձայն և շրջվելով՝ տեսա, որ Ռայընը կանգնած էր մեր ավտոմեքենայի դռան մոտ և ցանկանում էր ցատկել և վերադառնալ Դեննիիենց տուն: Ես բռնեցի նրա բաձկոնից: Հետո ես շարունակեցի անել այն, ինչ կանեին մայրերը: Սարսափելի է, որ մեր երեխաները չունեն վտանգի հայեցակարգ, վախ մահվանից: Ռազմածովային ուժերում կային տերմիններ նախատեսված դրա համար: Իմ ամուսինն այնտեղ էր աշխատում և նա Ռայանի կյանքի տարբեր փուլերի համար ուներ մականուններ: Նա Ռայընին այդ ժամանակ կոչում էր NAFA, քանի որ նա չունեի վախ մահվանից:

Մենք ստիպված էինք Ռայընին սովորեցնել, թե ինչպես անի ամեն ինչ: Նա նույնիսկ չգիտեր՝ ինչպես ժպտար նկարվելու համար: Շատ մարդիկ չեն հասկանում, թե մեր՝ աուտիզմ ունեցող երեխաների ծնողներիս կյանքը ինչքան դժվար է: Մեր շատ բարեկամներ հավատում են, որ մեր երեխաները երեսառած են և իրական խնդիրը մեր դաստիարակությունն է: Բայց եթե դու ծնող ես Ա խմբում, ես ստիպված չեմ բացատրել այդ ամենը, դուք կհասկանաք: Մինչև հիմա իմ մի մասը կարծում է, որ գուցե իմ բարեկամները ճիշտ էին՝ ասելով, որ

ես եմ ստեղծել Ռայընի խնդիրները: Բայց դաստիարակումը կանոնավոր կանոններով արդյունք չունի, երբ դու ունես աուտիզմ ունեցող երեխա: Ինձնից ժամանակ պահանջվեց, որպեսզի հասկանայի, որ աուտիզմը իմ մեղավորությունը չէր: Ես ստիպված էի կրկնել դա անընդհատ, մինչև սկսեցի հավատալ դրան: Եթե դու այնպիսի շրջանում ես, երբ քեզ ասում են, որ քո երեխան երեսառած է, և եթե դու մի փոքր կարգապահություն պահանջեիր նրանից, լավ կլիներ՝ այդ ժամանակ ինքներդ ձեզ ասեք, որ աուտիզմը ձեր մեղքը չէ, մինչև կհավատաք: Ես մանկաբույժին հարցնում էի, արդյոք Ռայընը լավ է: Մեր բժիշկը ասաց, որ դու չես կարող համեմատել Ռայընին քո մեծ աղջկա հետ: Տղաները ավելի ուշ են խոսում: Սկզբում մենք ժխտում էինք դա, բայց երկար ժամանակ այդպես չէր կարող շարունակվել, քանի որ մենք չափազանց շատ գործ ունեինք անելու: Այդ ժամանակ մենք պատկերացում չունեինք, թե քանի միլիոն ծնողներ ունեին նման մտքեր իրենց ոչ սովորական երեխաների մասին: Հետո մենք արդեն A խմբի անդամներ էինք: Մենք գնում էինք հոգեբույժի գրասենյակ, երբ Ռայընը համարյա 4 տարեկան էր (նախքան նրա ծնունդը) և արդեն պատրաստ էր պատասխաններ գտնելուն: «Երկվորյակ քաղաքներում» (Twin Cities), որտեղ մենք ապրում էինք Միննեսոտայում, չկային լավ մասնագետներ: Աուտիզմի առաջատար մասնագետը, ում մոտ, որ մենք գնացել էինք, ասացին, որ բուժում և հույս չկա, և մեր երագանքները Ռայանի մասին հողս ցնդեցին: Այդ մասնագետն ասաց, որ մենք հաջողակ կլինենք, եթե Ռայընը ինչ-որ ընկերության ներքնահարկում համակարգչի գործով զբաղվի, որտեղ նա ստիպված չի լինի գործ ունենալ մարդկանց հետ: Ապա նա ավարտեց իր խոսքը՝ ասելով, որ այսպիսի երեխաները սովորաբար ավարտում են համալսարան կամ ընկնում բանտ: Մի՛ հավատացեք դրան:

Մենք աուտիզմի կղզում մենակ էինք: Մենք մի բժշկից մյուսի մոտ էինք գնում՝ օգնություն փնտրելով: Կային նյարդաբաններ, զարգացման մանկաբույժներ և այլ տեսակի մասնագետներ: Եվ ամիսներ էր պահանջվում նրանց մոտ գրանցվելու համար: Շատ ժամանակ բժիշկները մի քանի րոպե էին մեզ տրամադրում, և նույնիսկ չէին զննում Ռայընին: Լսելով աուտիզմ բառը՝ նրանք մեզ անմիջապես դուրս էին հրավիրում: Ապա օձի յուղ վաճառողը փորձում էր վաճառել մեզ թույլերի համար նախատեսված բուժում: Սա բազմամիլիոն դոլլար արժողությամբ բիզնես է ֆինանսավորված մեզ նման ծնողների վախերով և ձգտումներով: Ես ստիպված եմ ընդունել, որ մենք շատ թանկ և խենթ քայլերի ենք դիմել, մինչև որ չհասկացանք, որ չկա կախարդական բուժում: Եթե դա հնչում է շատ հեշտ, ապա դրա ճիշտ լինելու

հավանականությունը քիչ է: Միայն մեկ անգամ ես արդեն պատրաստ էի հանձնվելուն: «Աուտիզմի ամերիկյան հասարակությունում» (Autism Society America) ես կարդացի նամակ մի երեխայի մասին, ում օգնել էին Կալիֆորնիայում: Հաջողությունն ու ժամանակի կարգավորումը նույնպես Ռայընի բուժման մասն էին կազմում: Մենք գնացել էինք Կալիֆորնիա՝ մեր ընտանիքի հետ շնորհակալության տոնը (thanksgiving) նշելու: Այս բժիշկը այն չանվանեց աուտիզմ, այլ ասաց, որ դա բժշկական վիճակ է՝ պայմանավորված աուտոիմունային էնցեֆալիտի (autoimmune encephalitis) հետ: Այսինքն Ռայընը գլխուղեղի բորբոքում ուներ: Նա մեզ ուղարկեց Harbor UCLA բժշկական կենտրոն՝ neuroSPECT ստանալու: Սա շատ թանկ թեստ է: Լավ էր, որ մենք այն անցանք, բայց ես խորհուրդ չեմ տալիս պարտադիր անել այն, քանի որ մեր երեխաների համար դժվար է դա անելը: Ես նկատի ունեմ, որ լավ է, որ այն գիտականորեն ապացուցում է, որ մենք ինչ արեցինք, օգնեց Ռայընին, բայց դա շատ դժվար է անելը: Դա շատ թանկ է և իրականում այդքան էլ չի փոխում բուժման ընթացակարգը: Թեստը ցույց տվեց, որ Ռայընի ուղեղի բորբոքումը առաջացրել է նրա ուղեղի տարբեր մասերում արյան հոսքի նվազում, ներառյալ այն հատվածները, որոնք պատասխանատու են խոսքի, սոցիալական հմտությունների համար: Բժիշկ Մինան, ով երբեք չէր հանդիպել Ռայընին, նայելով սկաների արդյունքներին՝ իր զեկույցում գրեց «Աուտիզմ» և բացականչական նշաններ: Ինչպես կարող էր նա տեսնել իմ տղայի աուտիզմը, եթե այն հոգեկան կամ հոգեբուժական վիճակ էր: Երբ մենք 2 տարի անց կրկնեցինք թեստը, արյան հոսքը շատ մասերում բարելավվել էր: Դրա համար էլ թեստը լավ է, քանի որ այն փաստում է, որ սա բժշկական խնդիր է: Այս անհատների իմունային համակարգը այդքան էլ լավ չի աշխատում: Մեր երեխաները ընկնում են 2 ծայրահեղությունների մեջ: Երբեմն նրանց իմունային համակարգը չի գործում, երբեմն էլ այնքան լավ է աշխատում, որ պայքարում է վարակների և բուժում չունեցող վիրուսների դեմ: Աուտիզմը բժշկական վիճակների պատճառը չէր, որոնցով իմ տղան տառապում էր: Իրականում հակառակ պատկերն է: Բժշկական վիճակներն են առաջացրել աուտիզմը: Իմ տղային մի բան չի օգնել, այլ շատ բաների համադրությունը: Ես կոչում եմ սա իմունային համակարգի ընդհանուր ծանրաբեռնվածություն: Երբ մենք դա արեցինք, այդ ժամանակ նրա վիճակը լավացավ: Մենք բուժում էինք թաքնված վարակներն ու վիրուսները: Հակավիրուսայինները և հակաբորբոքայինները իմ տղայի համար մեծ նշանակություն ունեցան: Շատ մարդիկ վախենում են օգտագործել դեղատոմսով դեղեր, բայց ոչ ես. այն

պատճառով, որ Աստված ստեղծել է արյան թեստերը, և երբ դու ընդունում ես այս դեղերը, և դրանք ազդում են քո երիկամների և լյարդի վրա, դու տեսնում ես դա և կարող ես դադարեցնել դեղորայքի օգտագործումը: Ես մշտապես անհանգստանում էի, թե ինչ եմ անում նրա հետ, արդյոք նրան վտանգի եմ ենթարկում՝ տալով այս ծանր դեղերը: Մեր երեխաները հիվանդ են, և նրանք այս դեղերի կարիքը ունեն: Մենք բուժեցինք սինուսի վարակները և նրա դիետայից հանեցինք կաթնամթերքի նման ուտելիքները, ինչը աուտոիմունային պատասխանի էր հանգեցնում: Ռայընի համար կաթնամթերքից հրաժարվելը շատ փոփոխություններ բերեց: Ռայընի նման շատ երեխաներ ունեն MTHFR գեների մուտացիա, և նրանք տոքսիններից ազատվելու խնդիրներ ունեն: Մենք բոլորս կախված ենք լեյկովորինի նման դեղերից: Դրանք մեծ ազդեցություն ունեցան իմ տղայի խոսքի բարելավման վրա: Ես ունեի MTHFR գեների մուտացիա և սկսեցի ընդունել լեյկովորին: Իմ բժիշկը լեյկովորինի մասնագետ էր: Նա բժիշկ Ֆրայն էր: Ես մասնակցել եմ նրա մասնակցությամբ կոնֆերանսներից մեկին, որտեղ նա խոսում էր լեյկովորինի մասին և բացատրում այն բժշկական տեսանկյունից: Նա շատ խելացի էր, և ես գաղափար չունեի, թե նա ինչի մասին էր խոսում: Եվ ես խնդրեցի նրան բացատրել ինձ բժիշկ մոր տերմիններով: Ես ասացի, որ տղաս կշռում է 68 կգ: Ինչքան պետք է նա օգտագործի դեղամիջոց: Նա ասաց, որ օրական 50 միլիգրամից ոչ շատ: Երբ մենք գնացինք տուն, սկսեցինք անել դա: Նախկինում կային ուտելիքներ, որոնց հանդեպ նա զգայուն էր, իսկ այդ ժամանակ՝ այլևս ոչ, և դա հրաշալի էր: Ես սկսեցի ընդունել այն, և ուղեղի մառախուղը անցավ: Նախկինում, երբ գրում էի, պետք է 100 անգամ ստուգեի՝ արդյոք ճիշտ եմ գրել, քանի որ միշտ սխալներ էի գործում և չէի կարողանում պարզ մտածել: Իմ գիրքը հրատարակչի մոտ էր, և հարկավոր էր գրքի կարճ նկարագրություն, այդ պատճառով ես խոսեցի բժիշկ Ֆրայնի հետ և նրան խնդրեցի գրել նկարագրություն գրքի համար: Նա համաձայնեց: Հետո ես նրան ասացի, որ իմ արյան ճնշումը ցածր է և դա տարօրինակ է: Ես դեռ "coach potato" եմ, երբ ամբողջ օրը նստում եմ համակարգչի առաջ և օգնում մայրերին: Ես երկար ժամանակ էի անցկացնում համակարգչի առաջ՝ օգնելով ամբողջ աշխարհի մայրերին և հայրերին: Միակ բանը, ինչ ես փոխեցի, այն էր, որ սկսեցի օգտագործել լեյկովորին: Երբ ասացի բժշկին, որ ճնշումս կարգավորվել է, նա ասաց, որ ինքն էլ կսկսի օգտագործել, քանի որ նա բարձր ճնշում ուներ: Նա ինձ հարցրեց, թե ինչ քանակությամբ օգտագործի: Ես սկսեցի ծիծաղել և ասացի 50 միլիգրամ, ինչպես դուք էիք ասել: Աուտիզմի, լեյկովորինի մասնագետն ինձ

էր հարցնում, թե ինչքան պետք է օգտագործի: Ես դա շատ զվարճալի եմ համարում: Մենք անընդհատ սովորեցնում ենք բժիշկներին: Ես մտածում էի, որ Ռայընի խնդիրները կլուծվեն, եթե նա շատ խոսեր, բայց ես չէի հասկանում, որ նրա նման երեխաները չէին սկսում ամբողջական նախադասություններով խոսել, երբ վերականգնում էին իրենց առողջությունը: Առողջ երեխայից պահանջվում է գրեթե 3 տարի լեզու սովորելու համար: Նրանք բոլորը ստիպված են անցնել զարգացման նույն քայլերը, ինչ որ առողջ երեխաները: Երբեմն նրանք փորձում են նորից, և նրանց 2 տարեկանի վարքը չի թվում լավ 5 տարեկանում: Նրանք լավանում են և սկսում են ուշադրություն դարձնել շրջապատին: Հիմա նրանք պատրաստ են ինչ-որ բաներ պաշտպանել և ցանկանում են մտածել: Շարժման պլանավորումը (Motor planning) դժվար էր նրա համար, օրինակ՝ հեծանիվ վարելը: Նրա վիճակն այնքան վատ էր, որ ես մինչև 7 տարեկան կերակրում էի, քանի որ նա չէր կարողանում որոշել, թե ինչ ուտեր: 10 տարեկանից նա սկսեց օգտագործել հակավիրուսայիններ: Նրա վիճակը լավացավ: Բժշկական միջամտությունը բուժում է այն խնդիրները, որոնք մարմինն ունի: Դրանից հետո նրանք կարողանում են սովորել:

Դուք պետք է նկատեք, թե նրանք ինչ են այդքան ժամանակ բաց թողել ինսուլտի գոհի նման: Դա դաժան գործ է: Ես կարծում եմ, որ այդ պատճառով շատ երեխաներ չեն լավանում, քանի որ ABA կամ բժշկական միջամտության են դիմում՝ չմիավորելով այդ երկուսը: Իսկ մենք կատարեցինք ABA-ի մեր տարբերակը և կատարում էինք այն, ինչ Ռայընը սիրում էր և ցանկանում, որ սովորեցնեիք իրեն: Վերելակները, բանալիները, փականները, ավտոմեքենաները, համակարգիչները, տեխնոլոգիական շնաձկները, էլեկտրական խրոցակները, երկարացման լարերը, լուսային անջատիչները մեր յուրաքանչյուր դասի մի մասն էին կազմում: Մենք օգտագործում էինք գովեստներ և գրկախառնություններ, մինչև որ նա կարողացավ ցույց տալ, որ սիրում է դրանք: Նա չէր սիրում, երբ իրեն դիպչում էին: Ես բռնում էի նրան, դիպչում, գրկում, համբուրում և ասում. «Ռայըն, դու պետք է գրկես ինձ, ես քո մայրն եմ: Դա քո գործն է»: Եվ նա սկսեց անել, և ի վերջո սովորեց սիրել դա: Այնպես չէ, որ կգարթնեք մի օր և ձեր երեխան առողջացած կլինի: Իմ երեխան հիվանդ է եղել երկար ժամանակ: Դուք պետք է 3 քայլ առաջ և 10 քայլ ետ անեք: Դա է ճանապարհը: Դա ուղիղ վերելք չէ, և, սովորաբար, լինելով գազաթին, պատարաստ լինելով թռիչքին և առաջ շարժվելուն՝ դու չես իմանում՝ արդյոք դու կարող ես առաջ շարժվել, բայց դու ստիպված ես: Քո փոխարեն ոչ մեկը դա չի անի: Ես զարմացել էի՝ նկատելով, որ Ռայընը բարելավել էր իր խոսքը և

առևտրի կենտրոնում զայրույթի պոռթկումներ չէր ունենում: Օրվա ընթացքում մեկ ձախողումը բավարար է այդ օրը աճ գրանցելու համար: Սովորաբար ծնողները ասում են ինձ, որ իրենց երեխան ագրեսիվ չէ և նրանց հետ համեմատաբար հեշտ է: Ես հարցնում եմ նրանց, թե ինչքան են փոխել աշխարհը իրենց երեխաների համար, որպեսզի կանխեն ձախողումները: Մենք չենք գիտակցում, որ մենք դա անում ենք: Այն ունի կարճաժամկետ հեռանկար և երկարաձգում է մեր ներկայությունը աուտիզմի կղզում: Բուժումը պահանջում է ժամանակ և չհանձնվելու մոտեցում: Որոշ մարդիկ անվանում են այն համառություն կամ հաստատակամություն, իսկ ես բնութագրում եմ այն հետևյալ կերպ՝ լինել ավելի համառ, քան մեր երեխաները: ABA թերապիան սկսելուց հետո իմ տղան սկսեց անել բաներ, որոնք մինչ այդ չէր անում: Իմ տղան, ով երբեք ագրեսիվ չէր, սկսեց հարվածել, կծել, կճմթել: Նա դարձրեց դա վատ սովորություն, մինչև նա հասկացավ, որ տարբերություն չկա, թե ինչքան շատ կփորձեր ինձ ցավեցնել, մինևույն է ես չէի հանձնվելու: Ռայանը սովորական հիմնական դասարանում էր սովորում, չնայած դեռ պատրաստ չէր: Տարրական դպրոցում նա օգնական ուներ, ով ներկայացվել էր որպես ամբողջ դասարանի օգնական, որպեսզի նա նրանից շատ կախված չլիներ: Երբ նա օգնության կարիք ուներ, օգնականն անմիջապես այնտեղ էր նրա սխալներն ուղղելու համար: Երբ նա մանկապարտեզում էր, գիտեր մի քանի բառ և նրա առաջադիմությունը խոսքի համար 68 էր, բայց 4-րդ դասարանում արդեն հասել էր մոտավորապես 72 միավորի: Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում ես նամակ էի գրում նրա ուսուցիչներին՝ կետերով նշելով այն ամենը, ինչ նա չի կարողանում անել, քանի որ ես չէի ցանկանում, որ նրան ընդունենին որպես կոմպար և չհնազանդվող: Կարծում եմ, որ այդ նամակները նյարդայնացնում էին նրա ուսուցիչներին, բայց դա ինձ համար շատ կարևոր էր, քանի, որ ամեն տարի այդ նամակը գրելուց առաջ նշում էի այն բաները, որ նա արդեն կարողանում է կատարել: Այդպես ես հասկանում էի նրա գրանցած ձեռքբերումները: Երբ մենք նայում ենք պատին և մեր երեխաներին, մենք չենք կարող ասել, թե ինչքան են նրանք մեծացել, մենք պետք է փոքր նշում անենք պատին, որպեսզի հասկանանք, թե ինչ հասակ ունեն: Այսկերպ ուսուցիչներին ուղարկված նամակը ինձ համար նշում էր պատին: Մինչև 5-րդ դասարան նա արդեն մեծամասամբ հասկանում էր դասընթացը: Բայց նա դեռ կազմակերպված չէր, նա կորցնում էր ամեն ինչ: Երեխաների ուշադրությունը գրավելու համար իր մատով անընդհատ հարվածում էր նրանց, քանի որ ցանկանում էր ընկերներ ունենալ, բայց չգիտեր, թե ինչպես: Նա խոսում էր՝

օգտվելով գրություններից, ինչպես ես էի նրան սովորեցրել և խոսում էր միևնույն բանի մասին անընդհատ, մինչև բոլորս ցանկանում էինք բղավել: Միայնությունը, որ զգում էր տղաս ամենադժվար տեսարանն էր: Նա իրոք ցանկանում էր ընկերներ ձեռքբերել: Շատ դժվար էր, երբ նա արդեն գիտակից էր և ներգրավված չէր լինում: Սովորաբար տարրական դպրոցում նա միակ երեխան էր, ում ծննդյան տոներին չէին հրավիրում: Միջնակարգ դպրոցում նրան նեղացնում էին: Դա հավանաբար իմ միակ սխալն էր: Եթե կարողանայի ժամանակը ետ տալ, ես միջնակարգ դպրոցը կփոխարինեի տանը անցկացվող դասերով և դրանից հետո միայն ավագ դպրոց կտանեի: Ավագ դպրոցում ամեն ինչ կարգավորվեց: Բայց ոչ աշխատանքային օրերը նա անցկացնում էր տանը մեզ հետ, մենք էինք նրա ընկերները: Ռայընը ավագ դպրոցում հաճախում էր վազքի դասերի (cross-country) նույնիսկ տանը անցկացվող դասերի ընթացքում, քանի որ երիտասարդ, գեղեցիկ Լամիան նույպես հաճախում էր: Ռայընը սիրահարվել էր նրան: Որպես արդյունք իմ տղան միացավ աֆրիկա-ամերիկյան գրական խմբակին: Քոլեջ ընդունվելու հայտը նա գրել էր դրա մասին: Ես վստահ եմ, որ նրանք զարմացած էին: Երբ նա ավարտեց քոլեջը, նա դեռ այդքան էլ ինտեգրված չէր հասարակությանը: Նա շատ անմեղ էր և հեշտ էր նրան շահագործելը: Հետո Ջասթինը հայտնվեց նրա կյանքում: Ջասթինը Հարվարդի համալսարանն էր ավարտել: Ես գիտեմ, որ նա մի օր կառաջադրվի որպես նախագահի թեկնածու, և մենք բոլորս կօգնենք նրան, քանի որ նա հրաշալի մարդ է: Այս մարդիկ Ռայընին սովորեցրել են այնպիսի բաներ, որոնք ես չէի կարող սովորեցնել: Դրանք սոցիալական հմտություններն էին: Եվ յուրաքանչյուրը կարիք ունի Ջասթինի և Լամիայի իր երեխայի կյանքում:

Շատ դժվար է շարունակել խոսել երեխայի հետ, ով չի պատասխանում: Այն ինչ ես ստանում էի, նրա դատարկ հայացքն էր: Դուք բոլորդ տեսել եք, այնպես չէ՞: Դա նման է նրան, որ լույսերը միացված են, բայց տանը ոչ ոք չկա: Ռայընը չէր արձագանքում ինձ ոչ հայացքով, ոչ էլ ժպիտով: Բայց ես միևնույն է շարունակում էի խոսել նրա հետ: Շուտով նա բարելավեց շատ բաներ, ինչ սովորել էր իմ միակողմանի զրույցներից: Մենք օգտագործում էինք յուրաքանչյուր հնարավոր պահ նրան սովորեցնելու համար: Երբ մենք ռեստորանում էինք, մեր պատվերին սպասելու ընթացքում մենք աշխատում էինք: Ռայանի դեմքը միշտ խոժոռ էր: Նա նման էր Գրամփին (Mr. Grump): Երբ մենք ռեստորանում էինք լինում, փնտրում էինք մարդկանց, ովքեր ուրախ էին: Եվ ես մտածում էի, թե ինչն է նրանց դարձնում գեղեցիկ: Նրանց աչքերը, նրանց ժպիտը: Մենք փորձեցինք այդ ամենը նորից և նորից մինչև նա հասկացավ՝

ինչպես պետք է ժպտալ: Ամեն բուստ աշխատելը հոգնեցուցիչ էր: Երբ դա արդեն չափազանց էր, ես դադարեցնում էի ամեն ինչ մի քանի օրով: Եվ այդ ժամանակ ես պետք է լինեի նրա մայրը, այլ ոչ թե ուսուցիչը, վարքաբանը: Ռայանն էլ ուներ դրա կարիքը: Թվում է, թե ես թաքստոցում ունեմ ծրագիր (master plan), որով առաջնորդվում եմ: Բայց ես «փրփուրներից էի կախվում», ինչպես և դուք բոլորդ: Ես չէի կարող հեռուն տեսնել կամ հանձնվել: Վերականգնումը մեկ օր և վարքագիծ է միևնույն ժամանակ: Ես փոքրիկ ճուտիկն (Chicken Little) էի և միշտ մտածում էի, որ սխալ է այն մտեցումը, որ աղետն անխուսափելի է (The sky was falling): Ես գայրանում էի, երբ կարդում էի հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին, որ կարող էր դեղորայքը ունենալ Ռայլնի լյարդի և երիկամների վրա: Ես դադարեցի անհանգստանալ դրա մասին, երբ գիտակցեցի, թե ինչի համար է Աստված ստեղծել արյան թեստերը: Բայց դա չստիպեց ինձ դադարել անհանգստանալ մնացած այլ բաների համար: Այս ախտորոշման ամենաբարդ մասը իմ կարծիքով ապրելն է այն վախով, թե ինչ ապագա կունենան մեր երեխաները: Ես միշտ մտածել եմ, արդյոք իմ երեխան ի վիճակի կլինի ապրել անկախ և ով նրա մասին հոգ կտանի, երբ ես և իմ ամուսինը չենք լինի: Երբ Ռայլնը միջնակարգ դպրոցում էր, նա բավականին ազդվող էր: Եվ իմ նպատակն էր այդ ժամանակ նրան տեսնել Mcdonald's-ում աշխատելիս և ինքն իր ապրուստը վաստակելիս: Ով կմտածեր, որ նա կդառնար օդատիեզերական ճարտարագետ: Այս խենթ մտքերն ինձ անհանգստանալու առիթ տվեցին: Ես այնքան հեռուն գնացի, որ արդեն կին էի փնտրում ամուսնուս համար, որ եթե ինձ հետ ինչ-որ բան լիներ, նրա հետ ամուսնանար: Ես ցանկանում էի, որ ինչ-որ մեկը տղայիս սիրեր, եթե ես չկարողանայի նրա հետ լինել: Ամուսինս բողոքում էր: Գեղեցիկ տեսքով միայն մեր վարսահարդարն էր: Կային ընտանեկան շատ վեճեր և լարվածություններ: Իմ ամուսինը համոզված էր որ ես բնավորությամբ մեղմ եմ, իսկ ես էլ այն կարծիքին էի, որ նա կոպիտ է: Մշտական սթրեսը ամուսնության ժամանակ դժվար է: Ես չէի ներգրավում նրան որպես Ռայանի թիմի անդամ: Ես ցանկանում էի, որ նա չլինի այդ ճանապարհին և ես կարողանայի նրան միայնակ բուժել: Ես չէի հասկանում, որ եթե ես չսկսեմ նրան ճիշտ վերաբերվել, նա գումար չի վաստակի, որպեսզի ես կարողանամ երեխայիս բուժել: Այսպիսով, կարևոր է, որ ձեր ամուսիններին, կանանց ներգրավեք ձեր թիմում: Ես մտածում էի միայն Ռայլնին օգնելու մասին: Եվ երբ չէի մտածում նրա մասին, մտածում էի աղջկա՝ Մեգանի մասին: Արդյո՞ք ես Մեգանին շատ եմ աշխատեցնում Ռայանին բուժելու նպատակով: Գիտեք, մենք խենթ ենք: Ես

կարծում եմ, որ մայրերը համառ են: Ռայանի ախտորոշումը մեզ դարձրել է խենթ: Բարեբախտաբար իմ ամուսինը չհրաժարվեց մեզնից՝ հաշվի չառնելով ինչքան վատ էի ես նրան վերաբերվել: Եթե ես իմանայի, թե ABA-ը ինչպես է ազդում ամուսնական գույգի վրա, ավելի քիչ վեճեր կլինեին: Ես կկարողանայի այնպես անել, որ ամուսինս ինձ նման կմտածեր: Տղամարդիկ շատ պարզ արարածներ են: Նրանք սիրում են համեղ ուտելիք, սեռական հարաբերություններ (նրանք բոլորը սիրում են սեռական հարաբերություններ) և հարգանք: Թվարկվածներից վերջինը միակ բանն էր, որ ես մոռանում էի: Ես դա լավ չէի կատարում: Եթե ես նրան ժամանակ տրամադրեի և հարգանքով վերաբերվեի, ինչին նա արժանի էր, ամեն ինչ ավելի հեշտ կլիներ: Ես մոռանում էի, որ նա էլ է Ռայանին սիրում: Այնքան դժվար էր, ես զբաղված էի Ռայլնի մայրը լինելով, փորձելով նրան պաշտպանել բոլորից ներառյալ սեփական հորից: Այդ պատճառով էլ ես մոռանում էի դա անել: Ռայլնի քույրն ուներ իր մշտական մասնակցությունն այս ամենում: Ռայլնն էր միշտ ուշադրությա կենտրոնում: Ամեն օր Ռայան, Ռայան և Ռայլն: Մենք Մեգանին դարձրեցինք խնդրի լուծման մի մասը: Նա ձևացնում էր, թե խաղում է Ռայլնի հետ և մենք վճարում էինք նրան: Դա նրան դարձրեց գնահատված, կարևոր և թիմի մի մասնիկը: Նա ամենաազդեցիկ թերապևտներից էր, որ մենք ունեցել էինք: Իմ և Մեգանի հանդիպման օրը ամեն շաբաթ երեկոյան էր: Ամբողջ շաբաթվա ընթացքում մենք շշնջում էինք և պլաններ կազմում այդ օրվա համար: Մենք վերցնում էինք ամբողջ ուտելիքը և քաղցրավենիքը, ինչը Ռայլնին թույլատրված չէր ունենալ տանը: Երբ շաբաթ երեկոն գալիս էր, Ֆրենկը Ռայլնին առաջարկում էր գնալ տեխնիկայի խանութ և դիտել խրոցակները: Դա նրան առանց ինձ տանից դուրս հանելու միակ տարբերակն էր: Եվ նա ասում էր. «Այո՛, հայրի՛կ»: Նրանք նստում էին ավտոմեքենա և գնում արկածների: Մենք նստում էինք բազմոցին և նայում ահավոր մի ծրագիր՝ Բժիշկ Քուին, բժկուհի կինը (Doctor Quinn, Medicine Woman): Դա նրա սիրելի ծրագիրն էր, և ես ձևացնում էի, թե սիրում եմ այնքան, որքան որ նա: Զվարճալի էր, քանի որ մենք միշտ անվանում էինք մեր շներին հայտնիների անուններով: Հիմա մենք ունենք Մարտի Մակֆլայ (Marty McFly), Մեդելին Կան (Madeline Kahn), նախկինում՝ Լյուկ Սքայվոքեր (Luke Skywalker), և Մեգանն ուներ Ստիվի Նիքս (Stevie Nicks) անունով շուն: Բայց նրա այժմյան շան անունը Doctor Quinn, Medicine Woman է: Նա նրան անվանում էր Քուին: Ահա թե սա ինչքան կարևոր էր նրա համար:

Տղայիս կյանքը շատ տարբեր է եղել, եթե ընդունենք նրա «աուտիզմը» կամ հավատանք մասնագետներին, որոնք ասում էին. «Մենք չէինք կարող ոչինչ անել»: Ինձ բարկացնում էր, երբ ինձ ինչ-որ մեկը ասում էր, որ մենք պետք է ընդունենք «աուտիզմը»: Աուտիզմը նվեր չէ, մեր երեխաներն են նվեր: Արդյոք մենք կընդունենք քաղցկեղը և չենք բուժի այն: Աուտիզմի ախտանիշները բուժելը չի փոխի այն հիանալի հատկանիշները, որ մեր երեխաներն ունեն: Այն միայն նրանց թույլ կտա լինել այնպիսին, ինչպիսին կլինեին նախքան աուտիզմի՝ մեր կյանք մուտք գործելը: Ռայընը «Աուտիզմի աչք» (Autism eye) ամսագրի շապիկին նկար ունի: Նա գրել է հոդված նրանց համար: Իմ բիզնես քարտում կան իմ տան հեռախոսահամարը, բջջային հեռախոսահամարը: Մտնելով իմ կայք և սեղմելով նկարի վրա՝ դուք կարող եք կարդալ ամբողջ հոդվածը: Զարմանալի է, որ Ռայանն ասում էր. «Որոշ մարդիկ կարծում են, որ մենք պետք է ընդունենք աուտիզմը, և կարծում են, որ երեխան, որը բուժվել է, այլևս այն նույն երեխան չէ: Ես դեռ նույն մարդն եմ, ինչ եղել եմ, միայն հիմա ես ուրախ եմ և կարող եմ վայելել կյանքը: Երբ բժիշկները հավատում են, որ աուտիզմի հետ կապված բժշկական խնդիրները զարգացման խնդիրների մասն են կազմում, երեխաները չեն բուժվում նույն բժշկական պայմաններով, ինչ յուրաքանչյուր այլ երեխա: Արդյոք դա նորմալ է»: Սրանով ամեն ինչ ասված է, այնպես չէ՞: Նա բավականին ուժեղ երեխա է: Ես հպարտանում եմ նրանով, այն անձնավորությամբ, ինչ դարձել է: Ժամանակ խնայելու համար կարող եք նամակ գրել իմ էլեկտրոնային հասցեին, ես ունեմ բժիշկների տվյալներ և այլ նյութեր, որոնք ձեզ պետք կզան: Ես մենակ եմ եղել աուտիզմի կղզում և չեմ ցանկանա, որ ինչ-որ մեկն էլ նորից մենակ լինի: Շատ դժվար օրերին այն, ինչ կարող էի անել, խորը շունչ քաշելն ու ինքս ինձ ասելն էր, որ վաղը կփորձեմ նորից: Արդեն 25 տարի անցել է Ռայանի ախտորոշումից: Մեր ամենամեծ մարտահրավերներից էր բժիշկներ գտնելը, ովքեր կբուժեին աուտիզմը բժշկական տեսանկյունից: Ես շատ ոգևորված եմ այն ամենով, ինչ բժիշկ Ադամսն անում է: Այդ իսկ պատճառով ես աշխատում եմ գումար հավաքել իր համար: Զգարմանաք, երբ գնաք ձեր բժշկի գրասենյակ և խնդրեք բժշկական բուժում աուտիզմի համար, և նա ձեզ խենթ կոչի: Նրանք վատ բժիշկներ չեն, նրանք մասնագիտացված բժիշկներ են, ովքեր բժշկական դպրոցում չեն սովորել աուտիզմի մասին: Մի մայր պատմում էր ինձ, որ շատ բժիշկների է դիմել առանց հաջողության կամ բարելավման: Բայց երբ նա գտավ ճիշտ բժշկին, նրա տղան այո, ոչ ասելուց բացի սկսեց նաև երեք բառից կազմված նախադասություններ արտաբերել և ունեցավ հսկայական ձեռքբերումներ:

Կարևոր է նաև նշել, որ հավասար ջանքերը չեն երաշխավորում հավասար արդյունք: Որոշ երեխաներ ունեն իմունային խնդիրներ, որոնք շատ են ընդարձակված մեզ հասանելի եղանակներով բուժելու համար: Այդ պատճառով ես շատ ոգևորված եմ այն ամենով, ինչ բժիշկ Ադամսը անում է, քանի որ իմ կարծիքով ցողունային բջիջները կլինեն ապագայի ալիքը, որոնք կարող են փոխել շատ բաներ մեր երեխաների համար: Ես ճանաչում եմ ընտանիքների, որոնք աշխատում են այնքան քրտնաջան, ինչքան ես եմ աշխատել, սակայն առանց նույն արդյունքի հասնելու: Ես ցանկանում եմ ասել, որ մենք բոլորս նույն ավարտը չենք ունենալու: Մենք ունենք տարբեր ճանապարհներ դա անելու համար: Ջենիֆեր Քոսակը գրել է «բժշկություն առանց վնասելու» թեմայով, նա դա արել է լրացումներով, բայց նա դա արել է: Եվ տարբերություն չկա, թե դու ինչպես ես արել, եթե հասել ես արդյունքի: Վերջնական արդյունքն է կարևոր: Որոշ երեխաներ կարող են դադարեցնել ընդունել ծանր դեղեր, երբ նրանք սկսում են լավանալ: Իմ տղան նրանցից մեկը չէր: Նա հիմա օդատիեզերական ճարտարագետ է: Նա ցանկացավ դադարեցնել հակաբորբոքային դեղեր ընդունել և 2 շաբաթ անց ինձ կանչեց՝ ասելով, որ նա իրեն լավ է զգում: Ես հարցրեցի նրան, թե նա ինչ է զգում: Նա ասաց, որ զգում է, որ բարձրաձայն ինքն իր հետ խոսում է: Լինելով նրա մայրը և ոչ այնքան բարեհամբույր մարդ՝ ես նրան հորդորեցի այլևս չանել այդպես: Նա ասաց, որ այլևս չի անի: Բայց դա այն է, ինչ նա զգում է, որ անում է: Ես նրան ասացի, որ, ճիշտ է, նա դադարել է օգտագործել դեղեր, բայց նա արդեն հասուն է և պետք է նորից դեղեր ընդունի: Նա սկսեց նորից դեղեր օգտագործել, և ամեն ինչ կարգավորվեց: Հակաբորբոքային միջոցների համար սկսեցինք օգտագործել Nizoral և Diflucan, իսկ հակավիրուսային միջոցների համար՝ Famvir և վալտրեքս (valtrex): Ես ունեմ ամբողջ տեղեկատվությունը, դուք կարող եք կապվել ինձ հետ: Ես ունեմ կարճ տարբերակը, թե մենք ինչպես ենք օգնել Ռայլնին, որով կարող եք կիսվել ձեր բժշկի հետ:

Ես ցանկանում եմ, որ դուք իմանաք, որ երբեք ուշ չէ սկսել բժշկական միջամտություն: Եթե ձեր երեխայի առողջությունը կարող է վերականգնվել թաքնված վիրուսների և վարակների բուժմամբ, այդ ժամանակ վերականգնումը դառնում է հնարավոր: Ann Millan-ի «Հավատացեք ապագային» (Believe in the Future) գիրքը նկարագրում է մանուկ հասակից մինչև հասուն տարիք եղած դեպքերը: Նա իր աղջկա՝ Ռոբինի աուտիզմը չի բուժել մինչև նրա՝ 28 տարեկան դառնալը: Երբ նա սկսեց անել այն, ինչ ցանկանում էր անել, դադարեցրեց ինքնավնասման և գոռալու

սովորությունները: Նա ուներ ինքն իրեն վնասելու բնավորություն և ամբողջ օրը կարող էր գռռալ: Ռոբինը հիմա աշխատում է որպես գանձապահ շաքարական 30 ժամ: Նա ապրում է առանձին իր մայրիկի փողոցին մոտ: Երեկ հեռախոսով խոսել եմ նրա հետ: Քանի որ նա մեծացել է, նրա մոտ սկսել է առաջանալ մակուլար դեգեներացիա, և նրա աղջիկը հոգ է տանում իր մասին: Մենք կարծում ենք, որ դա հիանալի է: Նրա կայքում այս գիրքը հասանելի է անվճար տարբերակով: Գրե՛ք գրքի վերնագիրը, գտե՛ք նրա կայքը և կարող եք անվճար կարդալ այնտեղ: Նա կա նաև ֆեյսբուքում և օգնում է շատ մարդկանց:

Ծնողները, վարքաբանները (behaviorists), մանկավարժները և բժշկական մասնագետները պետք է աշխատեն միասին որպես թիմ, որպեսզի օգնեն երեխաներին լավանալ: Մեզնից յուրաքանչյուրն ունի հանելուկի մի մասը, և սովորաբար ծնողները սխալվում են՝ մտածելով, որ ուսուցիչները, բժիշկները գիտեն ավելին, քան իրենք: Հեշտ չէ վստահել ինքդ քեզ, բայց դուք եք մասնագետները ձեր երեխաների համար: Եթե ես անեի այն ամենը, ինչ ասել էր բժիշկը, ով օգնել է իմ տղային ամենաշատը, Ռայընը ավելի լավ չէր լինի: Բայց եթե ես նրան գտած չլինեի, Ռայընը նորից լավ չէր լինի: Այսպիսով, դուք պետք է վստահեք ինքներդ ձեզ: Սովորաբար ծնողները սխալվում են՝ միայն ABA անելով, որովհետև մասնագետներն ասել են, որ այն միակ ապացուցված բուժման եղանակն է, բայց մենք միավորել ենք ABA-ը բժշկության հետ: Իմ տղային օգնելն ամենադժվար բանն է եղել, ինչ ես երբևէ արել եմ: Ես շատ սխալներ եմ գործել այդ ընթացքում, բայց միակ սխալը, որ չեմ գործել դա հանձնվելն է, անկախ այն բանից, թե ինչքան վատ է եղել իրավիճակը: Եվ հիշեք, որ դուք աուտիզմի բուժման շրջանում եք գտնվում և հենց առաջին փորձից չպետք է հանձնվեք: Ես երբեք ինձ չեմ հիշեցնում, որ ես շատ սխալներ եմ գործել: Դուք միշտ կարող եք փորձել մի այլ ուղղություն, երբ մեկը հաջողություն չի բերում: Եվ մենք պետք է փոխենք պատկերացումները աուտիզմի մասին, որ ամբողջ աշխարհը հասկանա, որ այն բուժելի է և այն պետք է դիտարկել բժշկական տեսանկյունից: Հետազոտությունը, որը բժիշկ Ադամսը կատարում է, կարող է բերել պատասխաններ, որոնք կօգնեն շատ երեխաների: Եվ մենք պետք է հաղթենք այն, քանի որ կան շատ երեխաներ, որոնք չեն բուժվում: Ահա տեսանյութը, որը ես եմ պատրաստել: Այն հիմա "Autism one"- ի պաշտոնական տեսանյութն է:

Փոխելով Աուտիզմի դեմքը

Պատկերացնենք աշխարհ, որտեղ երեխաները, ովքեր ունեն անբացատրելի ցնցումներ, ծանր ալերգիաներ, սննդային թերություններ, կրկնվող տենդեր, չեն դիմի բժշկների, փոխարենը կայցելեն հոգեբանների: Պատկերացնենք աշխարհ, որտեղ երեխաների մեծամասնությունը խոսելու ընդունակություն չունի և մոլորվել է իր իսկ սեփական աշխարհում: Արդյո՞ք մենք պետք է միայն կանգնենք և թողնենք, որ դա կատարվի: Դուք ստիպված չեք պատկերացնել դա: Սա այն աշխարհն է, որտեղ դու ապրում ես, եթե քո երեխան աուտիզմ ունի: Բայց հույս դեռ կա: Մեր երեխաները թևաթափ չեն լինում, նրանք միայն հիվանդ են: Եվ նրանք կարող են կազդուրվել: Աուտիզմը բուժելի է: Հետազոտողները, բժիշկները, ուսուցանողները, վարքաբանները ունեն աուտիզմի բուժման մի մասնիկը: Մենք պետք է միասին աշխատենք, բուժումը նորմա դարձնելու համար: Բժիշկները ամեն օր գտնում են ավելի լավ ճանապարհներ աուտիզմի բուժման համար: Ոչ ասա այն բժիշկներին, ովքեր ասում են, որ ձեր երեխան միշտ կմնա հիվանդ: Ասա այո այն բժիշկներին, ովքեր ասում են, որ գիտեն, թե դա ինչ է և կարող են բուժել այն: Չնայած աուտիզմը բժշկական ծանր վիճակ է, ոչ մի ծնող չպետք է համարի, որ չկան բաներ, որ նա կարող է անել: Մենք պետք է դադարենք տանջվել և ետ բերենք երեխային, որ նրանում է: Մենք կարող ենք վերջ տալ այս համաճարակին, որը տանում է մեր երեխաներին, վերցնում նրանց երջանիկ և արդյունավետ կյանքերը: Մենք այլևս չպետք է կանգնենք և նայենք, թե ինչպես են նրանք սայթաքում: Մենք պետք է հաղթենք աուտիզմի դեմ պատերազմը: Մենք պետք է լինենք ձայն այն մարդկանց համար, ովքեր չեն կարողանում խոսել: Աուտիզմ ունեցող երեխաներից շատերն ամբողջությամբ կորցրել են «աուտիզմ» պիտակը: Մի մասը այդ ճանապարհին են: Եթե շատ երեխաներ կարողացել են բուժվել, ապա ձեր երեխաներն էլ կարող են: Մի՛ հանձնվեք: Մի՛ սպասեք, սկսե՛ք ձեր երեխայի բուժումը հիմա: Մենակ շատ քիչ բան կարող ենք անել աուտիզմի համար: Միասին մենք անկոտորուն կլինենք:

Հարց ու պատասխան

- Հարց՝ Ինչպե՞ս կարող ենք գտնել ձեր վիդեոն:

Պատասխան՝ Այն իմ կայքում կա: Կարող եք դիտել և կիսվել ուրիշների հետ: Ինչ-որ մեկը ճանաչու՞մ է Ջեյսոն Մորալեսին: Մենք կարող ենք խնդրել նրան համերգ ունենալ և մենք կարող ենք ստանալ համերգից ստացված գումարը:

- Հարց՝ Ես ցանկանում եմ հարցնել առօրյայի պայմաններից: Ի՞նչ մենք կարող ենք անել նրանց ուժ տալու համար: Իմ տղան 15 տարեկան է: 19 ամսականում նրա մոտ աուտիզմ հայտնաբերեցին: Ես բուժման ճանապարհին եղել եմ երկար ժամանակ: Ես եկել եմ այստեղ 6 տարի առաջ: Նա կատարել է PANDAS: Նրանք ցանկանում են անկախ լինել, մենք էլ: Ի՞նչ կարող ենք մենք հիմա անել: Նա ցանկանում էր այլևս դիետա չպահել, քանի որ նա դիետա էր պահում 3 տարեկանից սկսած: Ես կարծում եմ, որ մենք պետք է նրանց ուժ տանք և նրանց միավորենք, ինչպես ծնողներս ենք հավաքվում: Արդյո՞ք կան նախաձեռնություններ, կամ կցանկանայի՞ք միանալ այդպիսի նախաձեռնությանը:

Պատասխան՝ Դա շատ դժվար է: Ես տանը փորձում էի պահել նրա դիետան, քանի որ դա այն էր, ինչ ես կարող էի կառավարել: Դպրոցում լինում էին հատուկ դեպքեր, երբ նա խախտում էր դիետան, և հետո ես պետք է իրավիճակն ուղղեի: Ես օգտագործում էի վարժություններ և ջուր նրա համար: Կարևոր է հրաժարվել այն ամենից, ինչ նրանց չի թույլատրվում: Երբ մենք ալերգիկ ռեակցիա ենք ունենում, որպես առաջին օգնություն ադրենալին ենք քեզ տալիս: Ի՞նչ է վարժությունն անում: Այն արագացնում է նյութափոխանակությունը: Այն օգնում է ավելի արագ ազատվել այս խնդրից:

Ռայրնի համար վարժություն կատարելը բանալին էր: Ամեն օր լողալը հրաշալի էր, նա մինչև հիմա սերֆինգով է զբաղվում: Ես էլ եմ պայքարել դրա հետ: Ես փորձում եմ չկարդալ այն ամենը, որտեղ գրված է, թե ինչը կարող է վատ ազդել աուտիզմ ունեցողների վրա: Մենք Մինեսոտայում էինք ապրում և ձմռանը դժվար էր վարժությունների համար տեղ գտնել: Մենք նրան տանում էինք Mcdonalds-ի խաղահրապարակ, ինչպես նաև ստացել էինք փակ լողավազանի անդամակցության տոմս: Վարժությունը և մայրն է բանալին: Եթե էլեկտրոնային նամակ գրեք ինձ, ես կարող եմ ասել, թե ինչպես է Ռայրնը դարձել օդատիեզերական ճարտարագետ, ընկերներ ձեռք բերել: Օրինակ՝ այս ամառ աշխատանքի վայրի 60 տարեկան կանանց հետ նա պատրաստվում է գնալ Թուրքիա, Ստամբուլ: Ռայանի հետ ճամփորդելը զվարճանք է: Մինեսոտայում նա գտնում էր հետաքրքիր վայրեր այցելելու համար: Մի անգամ մենք նավարկության էինք, երբ նա ասաց, որ էքսկուրսիա կա դեպի Լիտա և նա ցանկանում է գնալ: Ես նայեցի ավտոբուսով դեպի քաղաք գնալը 60

դովար էր: Նա ասաց, որ մենք կարող ենք դրա փոխարեն մտնել Walmart և վճարել 5 բաքս: Նրա հետ հանգստի գնալը զվարճանք էր: Երբ դու գնում ես հանգստի, տեսնում ես աշխարհը այլ կողմից:

Կարող եք գտնել իմ գիրքը իմ կայքում: Ես կարող եմ տրամադրել նաև գրքի կարճ տարբերակը: Ես շատ սխալներ եմ գործել, և գրքի նպատակը ձեզ սխալվելուց ետ պահելն է: Մեր երեխաները կարող են առողջանալ: